**From the desk of**
**ANTRANIK POLADIAN**

RECEIVED AUG 2 1985

Սիրելի Թորգոմ Սրբազան,

Կը յուսամ որ Թէքէեանի ՀԱՏԸՆՏԻՐՆ ու Թակորի հատորները ապահով ձեր ձեռքը հասան։

Ներփակ՝ անոնց հաշուեցոյցը։

Միշտ սիրով,

[signature]

31 Յուլիս 1985

Check mailed 8-12-85

Թիւ 29069
Օգոստոս 12, 1985

Նորին Սուրբ Օծութիւն
Տէր Տէր Վազգէն Առաջին
Սրբազնագոյն Կաթողիկոս Ամենայն Հայոց
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին.

Վեհափառ Տէր,

Ստացած ենք Յուլիս 5, 1985 թուակիր Ձերդ Սրբութեան նամակը ``Էջմիածնի Գանձերը`` եւ ``Արարատ`` հատորներու կապակցութեամբ։

Մեր հասկացողութիւնը այն էր որ վերոյիշեալ հատորներու միակ ցրուիչը Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի թեմերուն մէջ Առաջնորդարանս պիտի ըլլար։ Հաճեցէք ներփակ գտնել Փետրուար 16, 1984 թուակիր մեր նամակին օրինակը։

Սակայն այդ հրատարակութիւնները տակաւին չստացած՝ արդէն իսկ սկսան յայտարարութիւններ երեւիլ թէ Արեւմտեան թեմի, թէ Գանատայի թեմի եւ թէ մեր թեմին մէջ՝ առանց մեր գիտութեան։

Երբ մեզի լուր եկաւ որ գիրքերը հասած են՝ մօտ 700 --եօթը հարիւր-- տոլար մաքսատուրք վճարեցինք որպէս զի գիրքերը ստանանք։

Նկատի ունենալով որ, որդեգրուած սովորութեան համաձայն, Առաջնորդարանի գրատունը տասը առ հարիւր զեղչ մը կու տայ մեր թեմի բոլոր եկեղեցիներուն՝ Առաջնորդարանի անփոփոխ որոշեց ``Էջմիածնի Գանձերը`` 70 --եօթանասուն-- տոլարի եւ ``Արարատ``ը 10 --տասը-- տոլարի վաճառել։

Հազիւ յիշեալ հատորները վաճառքի հանուած էին՝ տեղեկացանք որ Լոս Անճելըսի ``Սարդիս`` գրատունը, Արեւմտեան թեմը եւ կարգ մը եկեղեցիներ, Գանատայի Առաջնորդարանը եւ բաժանեալ եկեղեցիներու կեդրոնը արդէն իսկ մեծաքանակ ստացած են նոյն հատորներէն եւ ``Էջմիածնի Գանձերը`` կը վաճառեն 60 --վաթսուն-- տոլարի։

Այս պարագան մեզի ենթադրել տուաւ որ անոնք 50 --յիսուն-- տոլարէն պակաս վճարած են որպէս փոխարժէք: Մօտ երեք ամիս առաջ յիշեալ հատորներու հրատարակիչ Տիար Վարդերես Գալայճօղեան այցելած է Առաջնորդարան եւ գրատան պատասխանատուին ըսած է որ ``Էջմիածնի Գանձերը`` 40 --քառասուն-- տոլարի տրամադրուած են բոլոր հաստատութիւններուն:

Ցարդ Առաջնորդարանի գրատունը վաճառած է ``Էջմիածնի Գանձեր``էն 80 օրինակ եւ ``Արարատ``էն 115 օրինակ:

Այս պայմաններուն ներքեւ, կը խնդրենք Ձեր Սրբութենէն որպէս զի մասնաւորաբար ``Էջմիածնի Գանձերը`` հատորին համար Առաջնորդարանէս պահանջըւի 40 --քառասուն-- տոլար: Այս պարագային կարելի պիտի ըլլայ հատորը 60 --վաթսուն-- տոլարի կամ աւելի պակաս գինով վաճառել:

Տրուած ըլլալով որ տօնական օրերը կը մօտենան՝ յոյս ունինք որ յարմար գին մը ճշդելով՝ որոշ քանակ մը կարելի պիտի ըլլայ սպառել:

Շնորհակալ պիտի ըլլանք եթէ այս մասին շուտով տեղեկացուի մեզի:

Ձեր Սրբութեան կը մաղթենք առաքել քաջառողջ եւ արեւշատ կեանք:

Մատչիմք ի համբոյր վեհից Օծեալ Աջոյն
Խոնարհաբար

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Թիւ 29965
Սեպտեմբեր 26, 1986

Ազնուափայլ
Տիկին Թագուհի Թամսըն
Ֆինիքս.

Ազնիւ Տիկին Թամսըն,

Ուրախութեամբ կը տեղեկացնենք որ կարելի եղաւ լոյս ընծայել ``Առտնի ժամագիրք`` մեծածաւալ եւ օգտակար գիրքը։

Ինչպէս գիտէք, այս ժամագիրքը՝ որ ամենէն գործածուած գիրքն է մեր եկեղեցիներուն մէջ,ի յիշատակ ձեր ամուսնոյն Սէթ Թամսընի հրատարակուած է ձեր նիւթական օժանդակութեամբ, որուն համար կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնը։ Այս մասին արձանագրուած է հրատարակութեան մէջ։

Մեր գնահատանքը արդէն յայտնած ենք ձեզի՝ որ համաձայն գտնուեցաք վաթսունըհինգ հազար տոլարի ձեր նուէրով կարելի դարձնել մեր թեմին մէջ եկեղեցական գիրքերու հրատարակութիւնը։

Առանձին ծրարով ձեր հասցէին կը ղրկուի երեք օրինակ նոր հրատարակուած ``Առտնի ժամագիրք``էն։ Եթէ աւելի օրինակներ կը փափաքիք ունենալ՝ հաճեցէք մեզի իմացնել։

Կ'աղօթենք որ Տէրը իր հովանին անպակաս ընէ ձեր վրայէն եւ իր շնորհներով զարդարէ ձեր կեանքի օրերը։

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Հոկտեմբեր 2, 1966

Ազնուափայլ
Տիկին Փառանձեմ Տէօքմէճեան
Նիւ Եորք.

Ազնիւ Տիկին Տէօքմէճեան,

Հաճեցէք ներփակ գտնել Առաջնորդարանի թիւ 8628 փոխագիրը, որ գրուած է ձեր անունին, եւ որ կը ներկայացնէ ձեր սիրելի ամուսնոյն՝ Օննիկ Տէօք-մէճեանի յանկարծական մահուան թուականին յաջորդող կիսամսեայ թոշակին գումարը։

Այս յաւելեալ վճարումը կը կատարուի Առաջնորդ Սրբազան Հօր յանձնարարութեամբ եւ ի գնահատութիւն ձեր ողբացեալ ամուսնոյն տարած աշխատանքին։

Այս առթիւ անգամ մը եւս ձեզի կը յայտնեմ իմ ցաւակցութիւնը՝ սիրելի Օննիկին անսպասելի մահուան առթիւ։ Աղօթող եմ ձեր առողջութեան եւ երկար կեանքին համար։

Աղօթարար

Խաժակ Վրդ. Պարսամեան
Առաջնորդի Փոխանորդ

Մարտ 19, 1987

Մեծայարգ
Տիար Արմէն Տօնոյեան
Կլէնտէյլ.

Յարգելի Տիար Տօնոյեան,

Առաջնորդ Սրբազան Հայրը ինծի տեղեկացուց Փետրուար 17, 1987 թուակիր ձեր նամակին բովանդակութիւնը։

Առաջնորդարանի գրասեան որդեգրած սովորութիւնը այն է որ հրատարակչատուններ կամ հեղինակներ իրենց գիրքերէն նմոյշներ կամ որոշ թիւով օրինակներըկը ղրկեն, եւ անոնց փոխարժէքը կը վճարուի երբ այդ գիրքերը վաճառուին։

Թէ համաձայն էք այս կարգադրութեան՝ բարի եղէք Նաւասարդ Ընկերակցութեան հրատարակութիւններէն օրինակներ ղրկել՝ նշելով գրասեան համար ճշդուած զեղչը, որ ընդհանրապէս կ'ըլլայ 80 առ հարիւր։

Ձեզի կը մաղթեմ առողջութիւն եւ յաջողութիւն։

Յարգանօք՝

Ալին Չաթմաճեան
Գրասեան Պատասխանատու

ՆԱՒԱՍԱՐԴ
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ
NAVASART
FOUNDATION, INC.

# Navasart
Armenian Literary and Cultural Monthly

(1) Nubar (2) Aline

*Board of Directors*
Lutfig Mardosian
*(Chairman)*
Dr. Zaven Guiragossian
*(Vice Chairman)*
Khachik (Chris) Janoyan
*(Vice Chairman)*
Khosrov Gharakhanian
*(Secretary)*
Libarid Azadian
*(Administrator - Treasurer)*
Dr. Arsen Danielian
*(Legal Advisor)*
Raffi Ourfalian
*(Legal Advisor)*
*Members*
Manoush Gevorgian
Hratch Apelian
Artoosh Satoorian
Dr. Noubar Janoyan
Hagop Messerlian
Tadevos Minassian

Armen Donoyan
*(President)*

ԳԵՐՇ Տ ԹՈՐԳՈՄ ԱՐՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ — Փետր 17.87

ԲԱՐԵՋԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Սրբազան Հայր, ինչպէս հեռախօսով յայտնեցի, մենք ամսագրի հրատարակութեան կողքին ունինք նաեւ կարգ մը կարեւոր գիրքերու հրատարակութիւն: Ասկէ առաջ մի քանի անգամ փորձած ենք ձեզի հետ կապ հաստատել, այսինքն ուղղակի դիմել գրատան պատասխանատուին , բայց ոչ մէկ պատասխան ստացած ենք:

Այժմ պիտի խնդրենք որ բարի ըլլաք մեր նոր հրատարակած ՏԱՏՐԱԳՈՄԻ ՀԱՐՍ հատորը նկատի առնուէր ձեր գրատան համար : Պատրաստ ենք մինչեւ իսկ 25 առ 100 զեղչ մը տալու:

Նմանապէս պիտի խնդրէի որ Քիւփէլեանին պատուիրէիք հայախօսներու ցանկը պատրաստելու. պիտի փորձենք ՆԱՒԱՍԱՐԴ ուղարկել իրենց, գուցէ սիրեն բաժանորդագրուիլ:

Ձեր այստեղ գտնուած միջոցին յայտնած էիք նաեւ որ պիտի ուղարկէիք Ձեր վերջին գիրքը:

Շնորհակալութիւններ եւ ձեր պատասխանին սպասելով

Համբոյր Ձեր Ս.Աջոյն

Արմէն Տօնոյեան

204 E. Chevy Chase, Suite 6, Glendale, CA 91205 - U.S.A. • (818) 241-5933